



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2021 թվականի N 849

ԱՃՈՒՐԴՈՎ ԳՈՒՅՔ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 19 մարտի 2021 թվականի թիվ 32 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Հայտարարել աճուրդ՝ հետևյալ ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը օտարելու մասին

ա) Ավտոտնակի կառուցման համար

1ա.1 Լազյան փողոց 37/23-1 ավտոտնակ՝ 22քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21,96ք.մ), կադաստրային ծածկագիր -06-001-0323-0038-001, մեկնարկային գինը սահմանված է 175000 (հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ՝ համաձայն «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված գույքի գնահատման հաշվետվության:

1ա.2 Լազյան փողոց 37/23-1 հողամաս 0,0022հա, կադաստրային ծածկագիր -06-001-0323-0038, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 24888,6 դրամ:

2. Վանաձորի համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի և դրանով զբաղեցված հողամասի աճուրդի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններն ու պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 21
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2021 թվականի N 850

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 111-1/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐԻ
«ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Յուրայի Առաքելյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30122019-06-0064 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 111-1/12 հասցեում գտնվող Վանաձորի «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող պարիսպը և դրա զբաղեցրած հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 111-1/12 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.

ա) 0.25141 հա մակերեսով հողամասի և 61.0քմ մակերեսով շինության փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի 111-1/12 հողամաս և պարիսպ (հատակագիծ թիվ 1).

բ) 0.02993 հա մակերեսով հողամասի և 6.0քմ մակերեսով շինության փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի 111-1/12-2/5 հողամաս և պարիսպ (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2021 թվականի N 851

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 21/9, ԹԻՎ 21/9-1 ԵՎ ԹԻՎ 21/9-2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ «ԴԱՐՄ-ՌԻՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԴԱՐՄ-ՌԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն Յոլակ Արմենի Ալեքսանյանի 29.01.2021թ. թիվ 01/1409 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16032021-06-0012, թիվ 19032021-06-0002 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1932535 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 18.03.2021թ. եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 21/9, թիվ 21/9-1 և թիվ 21/9-2 հասցեներում գտնվող «ԴԱՐՄ-ՌԻՄ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.28979հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող գույքը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 21/9, թիվ 21/9-1 և թիվ 21/9-2 հասցեներում «ԴԱՐՄ-ՌԻՄ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.28979հա մակերեսով հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների իրականացված հասարակական գործառնական նշանակության 222.82քմ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված հասարակական գործառնական նշանակության 222.82քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 217.01քմ) շինությունները՝ 28.78քմ (ներքին մակերեսը՝ 22.97քմ) պոմպակայանը, 149.17քմ մակերեսով ավտովագման կետը, 42.94քմ մակերեսով ծածկը, 0.45քմ մակերեսով հեղուկ գազի լցավորման սյունակը և 1.48քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն հատակագծի: 171.28քմ մակերեսով շինությունները թողնել ինքնակամ:
3. «ԴԱՐՄ-ՌԻՄ» ՍՊԸ-ի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 222.82քմ ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական գործառնական նշանակության շինությունների համար 757590 (յոթ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր իննսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բաղրամյան պողոտա, թիվ 21/9 հասարակական սպասարկման օբյեկտներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2021 թվականի N 852

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԹԻՎ 7/7 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՆԱ ՎԱԶԳԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոնա Վազգենի Հակոբյանի (ծնված՝ 20.04.1968թ.) դիմումը, 14.04.2021 թվականի թիվ 997 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20210414-88-5045595), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թիվ 7/7 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 199.1քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991թ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 199.1քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1991թ.-ից: Դեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սոնա Վազգենի Հակոբյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թիվ 7/7 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 199.1քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թիվ 7/7 (պայմանական) հասցեի բնակելի տան զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 199.1քմ մակերեսով հողամասի գործառնական կառուցապատման հողերի: Նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
4. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թիվ 7/7 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Տարոն-4 Սեբաստիա թաղամաս, թիվ 7/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 853

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Կարապետի Վարդանյանի դիմումը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2021 թվականի թիվ 01/04/4775-21 գրությունը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Արթուր Կարապետի Վարդանյանին 2021 թվականի ապրիլի 23-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի Գյումրի համայնքի ֆինանսական և ադմինիստրատիվ հարցերով օգնական և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սահմանել երեք ամիս փորձաշրջան:

3. Աշխատավարձը և պայմանագրի ժամկետը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 854

ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Հակոբի Բարսեղյանի դիմումը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2021 թվականի թիվ 01/04/4775-21 գրությունը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Լևոն Հակոբի Բարսեղյանին 2021 թվականի ապրիլի 23-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի Գյումրի համայնքի գնումների մասնագետ և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սահմանել երեք ամիս փորձաշրջան:

3. Աշխատավարձը և պայմանագրի ժամկետը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 22
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 855

ԷԴՈՒԱՐԴ ԱՇՈՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդուարդ Աշոտի Մանուկյանի դիմումը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2021 թվականի թիվ 01/04/4775-21 գրությունը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Էդուարդ Աշոտի Մանուկյանին 2021 թվականի ապրիլի 23-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի Գյումրի համայնքի հաշվապահ և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սահմանել երեք ամիս փորձաշրջան:

3. Աշխատավարձը և պայմանագրի ժամկետը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 22
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 856

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ-ի տնօրենի լիազորված անձ Արշակ Վաչագանի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022020-06-0040 վկայականը, 15.03.2021թ. տրված թիվ 03.01 լիազորագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.0903հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Փարաջանովի փողոց, թիվ 4/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 22
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 857

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ-ի տնօրենի լիազորված անձ Արշակ Վաչագանի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022020-06-0010 վկայականը, 15.03.2021թ. տրված թիվ 03.01 լիազորագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/2 հասցեում գտնվող «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.0903հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Փարաջանովի փողոց, թիվ 4/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 22
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 858

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ ՔՇՀ-3 ԹԻՎ 9/7-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ՔԱԶԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Քաջիկի Թաղևոսյանի լիազորված անձ Հովհաննես Ազիզբեկի Թաղևոսյանի
21.01.2021թ. թիվ 02/761 դիմումը, 20.11.2019թ. տրված թիվ 5511 (նոտարական ակտի կոդ: 741-
20191120-90-4319218) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ
իրավունքների պետական գրանցման թիվ 06042021-06-0034 վկայականը, ղեկավարվելով ՀՀ
կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և
35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս ՔՇՀ-3 թիվ 9/7-1 հասցեում գտնվող, Վանաձոր
համայնքի սեփականությունը ճանաչված 14.66քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝
13.86քմ) ավտոտնակը 24930 (քանչորս հազար ինը հարյուր երեսուն) դրամով և դրանով
զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 24.0քմ մակերեսով հողամասը 45940
(քառասունհինգ հազար ինը հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լևոն
Քաջիկի Թաղևոսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի
կառավարման և գովազդի բաժնին՝ Լևոն Թաղևոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 859

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՂԱՐՇԱԿ ԷՂԻԿԻ ՓԱՇԽՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշակ Էղիկի Փաշինյանի (ծնված՝ 19.03.1978թ.) դիմումը, 30.06.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 05.11.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2204 (նոտարական ակտի կոդ: 843-20201104-84-4789721) վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.03.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-47/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 5 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 256.0քմ հողամասին կից 29.40քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1986-1999թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 285.40քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վաղարշակ Էղիկի Փաշինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 256.0քմ հողամասին կից 29.40քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Վաղարշակ Էղիկի Փաշինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող 285.40քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աբովյան փողոց, թիվ 5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2021 թվականի N 860

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ալեքսանդր Տերյանի 2021 թվականի մարտի 05-ի թիվ 01/3293 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Երևան քաղաքի Սեբաստիա 123 հասցեում գործող «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ալեքսանդր Տերյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 22
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2021 թվականի N 861

ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԱՆ ԱՐԱՅԻԿԻ ՆԱՐՈՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Մեխակ Պետրոսյանի դիմումի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.03.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Կարեն Կոստանյանի և Արման Նարոյանի նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Մեխակ Պետրոսյանը իր դիմումով հայտնել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող Մոսկովյան 23 հասցեի վերաբերյալ ստացել է շինարարության թույլտվություն: Հետագայում պարզվել է, որ տվյալ հասցեի դիմացի տարածքը Վանաձոր համայնքի ղեկավարի որոշմամբ հատկացվել է այլ քաղաքացիների, ինչը խախտում է իր սեփականության իրավունքը, խոչընդոտում է շինարարական աշխատանքներին և անանցանելի է դարձնում մուտքի և ելքի ճանապարհը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.03.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Կարեն Կոստանյանը և Արման Նարոյանը Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի 23 հասցեում իրականացվող շինարարական աշխատանքներին և շինհրապարակի մուտքի-ելքի անցանելիության խոչընդոտներ են ստեղծում:

2021 թվականի մարտի 25-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի ապրիլի 12-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

09 ապրիլի 2021 թվականին Մեխակ Պետրոսյանը ներկայացրել է դիմում՝ վարչական վարույթի լսումների օրը հետաձգելու վերաբերյալ: Վարչական վարույթի լսումների օր է նշանակվել 23 ապրիլի 2021 թվականը:

23 ապրիլի 2021 թվականին ներկայացել է Մեխակ Պետրոսյանը, պատշաճ ծանուցված Կարեն Կոստանյանը վարչական վարույթի լսումներին չի ներկայացել, իսկ Արման Նարոյանին ուղարկված ծանուցագրի փոստային հետադարձ կտրոնը առկա չէ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարեն Արմենի Կոստանյանի և Արման Արայիկի Նարոյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 23
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2021 թվականի N 862

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

Գումարել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստ 2021 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում հետևյալ օրակարգով.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2021թ. Ապրիլի 30-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
զեկ. Մ.Ասլանյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
զեկ. Վ.Գրիգորյան
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
զեկ. Վ.Գրիգորյան
4. Վանաձոր համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին
զեկ. Կ.Պառավյան
5. Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին
զեկ. Վ.Դավիթավյան
6. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
զեկ. Գ.Մացակյան

7.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Մացակյան

8.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

9.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Գ.Բաղյան

10.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

11.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրել ու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

12.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

13. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

14. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

15.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Շիրակի խճուղի 50/1 հասցեում գտնվող 0.01232հա մակերեսով 06-001-0052-0074 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ս.Աբովյան

16.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Թևոսյան փողոց 2/13 հասցեում գտնվող 06-001-0211-0045 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ս.Աբովյան

17.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2021 թվականի N 863

ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՓԱՆՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Աշոտի Փանոյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Արմինե Աշոտի Փանոյանին 2021 թվականի ապրիլի 26-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի հաշվետվությունների գծով մասնագետ և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սահմանել երեք ամիս փորձաշրջան:

3. Աշխատավարձը և պայմանագրի ժամկետը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 23
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2021 թվականի N 864

ՄԱՐԻԱՄ ԱԼԵՔՍԱՆԻ ԹՈՐՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարիամ Ալեքսանի Թորոյանի դիմումը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2021 թվականի թիվ 01/04/4775-21 գրությունը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Մարիամ Ալեքսանի Թորոյանին 2021 թվականի ապրիլի 26-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի Գյումրի համայնքի օգնական և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սահմանել երեք ամիս փորձաշրջան:

3. Աշխատավարձը և պայմանագրի ժամկետը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 23
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2021 թվականի N 865

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ՀՀ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի ՀՀ Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 32 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 26
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 866

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 12 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Երեմի Հարությունյանի 25.01.2021թ. թիվ 985 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈՐԵՐՏԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 12 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.78քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.2քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.78քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 12 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 12-42/12 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 867

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/3 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Արմենի Կոստանյանի 22.01.2021թ. թիվ 908 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 36/3 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 59.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 52.66քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 59.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժնում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 36/3 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 6/3-40/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 868

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 79-30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱԶԻԿ ԿԱՌԼՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչիկ Կառլոսի Սարգսյանի 21.01.2021թ. թիվ 768 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30032021-06-0022 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 79-30/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 33.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 27.83քմ) մառանը 173160 (հարյուր յոթանասուներեք հազար հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 33.3քմ մակերեսով հողամասը 150650 (հարյուր հիսուն հազար վեց հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վաչիկ Կառլոսի Սարգսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վաչիկ Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 27
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 869

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23-188/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԶԻՎԱՆԻ ԿԱՄՍԱՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջիվանի Կամսարի Մովսիսյանի 02.02.2021թ. թիվ 1680 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12042021-06-0059 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 23-188/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.4քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 27.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Ջիվանի Կամսարի Մովսիսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ջիվանի Մովսիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի՝ 1.0քմ-ի համար ամսական 30 (երեսուն) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 27
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 870

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 35-16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԱՅԻԿ ԱՂՎԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Աղվանի Ասատրյանի 26.01.2021թ. թիվ 1141 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30032021-06-0015 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 35-16/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.52քմ) մետաղական ավտոտնակը 54600 (հիսունչորս հազար վեց հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 21.0քմ մակերեսով հողամասը 95010 (իննսունհինգ հազար տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արայիկ Աղվանի Ասատրյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արայիկ Ասատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մետաղական ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 27
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 871

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 459 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 29/03/2021թ. թիվ Կ-29032021-06-0116 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 11 մարտի 2021 թվականի թիվ 459 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 11 մարտի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 1 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակն օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 459 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1. Որոշման վերնագիրը «օրինականացնելու» բառից հետո լրացնել «,հողամասի գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:

2. Որոշման նախաբանը «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,» բառերով:

3. Որոշման 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով.
« 2. Փոխել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 1 շենքի հյուսիսային մասում գտնվող 0,0027հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:»:

4. Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը կարդալ որպես 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. ապրիլի 27
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 872

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 82 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Արտաշի Գալստյանի 25.01.2021թ. թիվ 978 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 82 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 65.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 62.64քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 65.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կաղաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 82 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 82-84/19-20 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2021 թվականի N 873

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11-3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԳՈ ՍՐԱՀԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

